

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Լ երբէք զի իմաստնագունիցն և հանձարեղաց ինքնախրախոյս սովորութիւն՝ յետնոց ապա չափաւոր մարդկան փախեսցի՝ ի ծանրալուծ օրէնս։ Օնոյն ապաքէն երկեղուկս արկանէր և ինձ այսօր պաշտամանս սովորոյթ և օրէնք վայելուչ ատենաքանելց , ո մեծախոչ ատեան , և ակըմքիս գահէրէց Այսուածարեալ Հայրապետ , եթէ զնուազութիւն միայն իմաստից և զբանից փանաքութիւն ընդ պերճախօս հանձարոյ առաջնոյն իմոց նախորդաց ՚ի կշիռ բերեալ տատամնէի : Այլ իմ վստահացեալ առաւել ընդ ձերդ երկայնամիտ զիջումն , և մանաւանդ ընդ արդարակորով դատաստան , համարձակիմ այնու՝ զի յիմացմունս սրտի և մտաց , որ կրօնականք , որ հայրենասիրականք և որ իմաստասիրականք , և որ ինչ բազմաջան արդեանց նոցին յարգասիս ՚ի կրթութիւն մանկուցյու ոչ ինչքան զնախորդս իմ պակաս գտանիմ :

Աւ զի յանցելումն և յառաջնում ամի աշակերտութեան իմոցս՝ զբաստիարակութիւնէ խոսեցեալ և զմարդոյ յընդհանուրս , յոր և ոգի պաշտամանս զիս ածեալ բերէր , ՚ի նոյն և զամն ողջոյն ամենայն մտադրութեամբ ուշ եղեալ ՚ի խոցընդուն խափանարարս անդ ՚ի յղկել յօրինել զմիտս , զոգի և զիրտ դաստիարակելոցն , տեսի , դժուարին գործ , թէպէտ ՚ի մանկունս յազնուամիտս և հլուս՝ արմատախիլ ընածինը առնել ՚ի սպառ զմոլաբոյսս ախտից և զընձիւզս մնասաբերս , որ բնածինն համարէին նոցա , և որ եկամուտ ՚ի նորաթեք հասակին բանիւք և օրինակաւ սպրեալ և ՚ի բնոյթ յաւելեալ : Աւ աստի զոգ հաւանեալ թուիմթէ ոչ լիապէտ յաջողութեամբ պսակեսցի դատիարակութիւն , որոյ չլոցէ սկիզբն և հաստատութիւն ընդ ծննդեան , ընդ կաթին և ընդ դեռաբոյս անտիական հասակին , կամեթէ դուն ուրեք և բազմաքիրտն դժուարութեամբ ՚ի գլուխ

հանել ոք զնոյն մարթասցի : Այսախորհուրդի ՚ի մտի եղի զայնմանէ խոսել որ կարեորն թուէր ինձ բան , թէ զիաքրդ ծնողաց է աստուածադիր պաշտօն պատրաստել զմիտս տղայոցն ՚ի նախադրունս անդ մարդկութեան առ ողջոյն խեկ ընթացս նորին : Աւ զի մայրենին քաղցրամոք ըղձալին տնտեսութիւն ընդ հայրականին միացեալ վսեմախառն և աստուածակարդ իշխանութեան , հզօր է և սիրելի ՚ի միտս տղայութեան , և զի օրինակք ծնողաց և բանք՝ նախատիպք են ազգու ՚ի հոգիս դիւրընկալս , որոց և օրէնսպիր և դատաւոր և առաջնորդ կարգեցան նոքա :

Ա խորհրդածութեանց սլացեալ մտօք և յապառնի կեանս մանկուցյս , նոր տատամութիւնք զիս պաշտամիցն . թէ իցեն արդեօք յինէն այլ պահանջք ՚ի խնամն , ՚ի փոյթ , ՚ի ջանս՝ որով և յաւելումն ինչ գործել բարեմասնութեան սանիցս և ակնկալեալ յաջողութեան խմաստնոյ ժողովոյս և լաւորերոյ ազգիս , և իցէ թէ մեօք վճարիցի ամենայն , եթէ և ՚ի ծնաղաց և յազգէն նորոյ սատարութեան մնայցեն : Այսոքիկ ահա կրկին տեսութիւնք կազմեսցեն զնիւթառաջարկեալ ձառիս , ուր օգտութեան նախատակիս առաւել միտ եղեալ բան ումպէտ զուարծութեան լսելեաց իմաստնոց և անկարօտից՝ ինդրեմ զերկայնամիտն ունկնդրութիւն :

Աթէ ձշմարտութեամբ յառակս ընկալաւ բանն , “ Այս ընդ ում կենաց , կցիս , և ասացից թէ որպիսի՞ ոք իցես . ձշմարտագոյնս արդեօք և իրաւամբք խնդրիցի թերեւս թէ յորոց ոք և յորպիսեաց զարմից իցէ սերունդ , և զոր մանաւանդ ընկալեալնախակրթանս տղայութեան , և զորպիսի՞ սկզբունս ՚ի հաստատութիւն խորհրդոց իւրոց և մտացն և իմաստասիրեալ ՚ի վերայ բերել զբուսոյ բարուց այնպիսւոյն և զողուոյն յօժարութենէ : Աւ բանզի խիթամզի մի առ դուրս անդ ձառիս լսելեաց իմաստնոց պատերազմող բանք իմ թուեացին , միտ գնել աղաչեմ , զի զա-

մենազօրն ազատութե՛ մարդոյս լւեալ, զմտացն միտելց բան արկանեմ։ Եակ այնու իսկ՝ զի ծնունդն մասն ելով էու թեան ծնողին և մարմնովն և մտօք, իցէ ապա և բերման յօժարութեանցն նմանութիւն ինչ ի նոսա. և այսը անժըիւ տելի հաւաստիք և արտաքուստ կեր պարանաց նմանութիւն՝ որ ներքնոյն է ընծայութիւն։ Եւ թուի իմն ոչ ինչ սխալել թէ այսպիսի ինչ ոք օրինակ կամիցի՝ ի ներքս ածելընդ ծնունդն և ընդ ծնող. որպէս թէ իցէ սա մանրանկար իմն՝ ի մեծէ նախատպէն ձարտար մատամբ փոխանցեալ՝ ի փոքրն և յամփոփ սահման, և լուսովքն և ստուերօքն ձըշ զըրտատիպ յօրինուած, այնպէս զի ընդ մանր թերութեանցն՝ ի մի տուեալ իցէ և զառաւելութիւնն և բովանդակեալ՝ ի մանրացոյց համառօտութիւն։

Այսկայն եթէ իցէ ինչ խտիր՝ այսու միայն, զի է ինչ զօշոտիչ աչաց և ակնահաճոյ՝ ի սմա, ՚ի պատկեր մանրանկար՝ քան ՚ի բնիկ իւր ՚ի սկզբնականն նախագիծ։ Քանզի յընտելն և ՚ի համսուօտ պարզութեան՝ ի դուրս ցայտէ գեղն, և ընդ մանր տեսութեամբ առագաստին թերութիւնք, և հզօր աչաց պէտք են՝ ի փեռեկել և ՚ի յայտ բերել զայնոսիկ։ Օ այս զանազանութիւն ահա գտանեմ ես յաճախ ընդ ծնողն և ընդ ծնունդ. և այս կարծեմ յարատիպ նմանութիւն յառակս եղ ընդ ամենայն ազգս և ընդ ժամանակս դարուց։ Քաջաց ազգ քաջքն, այն է քաջաց համարել զքաջս ծնանել։ Եւ ըստ այսմ ապա ձշմարտութեան՝ ծնողաց որ առաքինի զաւակաց ցանկան և մոտացեաց՝ պարտ է կանխել առաքինի լինել և մոտացի։ Քանզի և յիմարութիւն իսկ է հակառակաց լինել՝ ի խնդիր, և անկարելեաց հետամուտ. առ ազբերը կալ դառնահամ և աղտաղտին, և ջուր քաղցր ՚ի նմանէ խնդրել. կամ ըստ անսուտ քրիստոսապատգամ ձշմարտութեան՝ ՚ի փըշոց խաղող ակնկալել և ՚ի տատասկէ թուզ։

Այսկայն որչափ զօրաւոր է ձշմարտութիւնս և ամսաղարտելի ըստ արմա-

տոյն և պտղոցն լինել, ըստ բոլորին և մասն, ըստ ծնողին և ծնունդն, սակայն ըստ իս ևս զօրաւոր զնախնական մնունդին է համարել զտղայութեան, և զնախատիպ զդայմունս և զնախասկիզբն կրթութիւն։ Օ ի եթէ վարձկան մնընդամարցն լաւութեանց ոգւոց՝ որ դուն ուրեք է արդարե, և բազում այն է զի մոլութեանցն կցորդ գտանին մանկունք, վասն սակաւժամանակէայ պատուատելցն՝ ՚ի ծոց նոյա ՚ի գիւտ գուզնաքէի կերակրոյն, և վասն եկամուտ և տարեոր և վարձկան գգուանացն, զորս ընդ հուալ ընդ կերակրոյն անսպիտանութեն և մոռասցին, զինչ ապա մայրենին այն անմոռանալի և անքակտելի զօդ սիրոյ ոչ ներգործեսցէ՝ ՚ի միտս զաւակացն, զինչ այն սիրալիր գգուանք և աղդողական բանք և շարժումն ՚ի մայրական սրտէ արտաքս բերեալ առ իւր մասն և հատոր առ որդիականն սիրտ, որոյ և յիշտակք հաճութիւնաբելք ցծերոյթ պահին։

Քանզի մարդն նորակերտ յետ առնըց զզանգուած մարմնոյն ՚ի մարմնոյ ծնողացն, զսիրտն ՚ի սրտէ նոյին և զմիտրս ՚ի մօսացն, և մննգեամբ ՚ի ծոց մայրենի զնոյն ծծելով մասն ծնողին ՚ի զարդացումն առելցն ՚ի նմանէ, այսպէս անբանականն մարմին բանաւորին գործին մանանատիպ ծնողացն կազմի յընդունելութիւն ազգեցութեանց հոգւոյն։ Եւ իբրեւ խըրաի հոգին գործօն ՚ի մարմնի, և զի համեակ է և աշակերտութեն կարօտ և օրինակի և նմանութեան, մօտաւորագոյն ինքեան և միակ իսկ մերձաւոր զծնողս գիտէ, որովնորածին մարդոցն ուսուցիչ, կենացն առաջնորդ, դատաւոր գործոց, օրէնսդիր և աստուածիսկ գլխովին ծնողք են։ Ծանաչէ մանուկն յերկինս ՚ի վեր և յերկիր ՚ի խոնարհ այլ ոք ինքեան կարեռորագոյն, այլ ոք տէր և խնամիչ և պահպանող քան զծնողս։ ՚ի նոսա է ապատան յամենայնի, նոցա անսայ, և ՚ի նոցանէ յուսայ անձին զամենայն բարի։ Եւ զինչ ապա զարմանք, թէ հզօր իցեն ծնողաց ազգեցութիւնք։ Օ ի և ընդ

մեծայոց վստահութեանն 'ի ծնողս՝ որ
ինչ միանգամ յիւր շահ օգտին հայիցի ,
և ամենակարողս զնոսա համարի 'ի գործ
և ամենիմասսա 'ի խորհուրդ , որով և ու-
սուցիչս և օրէնսդիրս . որով և առանց
բնաւ երեկը յերկրայս լինելոյ՝ տւսանի
զոր տեսանէ , և ինքնաշարժ իմն բեր-
մամբ 'ի նմանութենէ մարմնոյ , և մտայ
և ըղձից և սիրոյն՝ ջանայ և յաջողի ան-
աշխատ գաղափարել յանձին ձշքրիտ
զծնողս : Որով վերակենցաղին նոքա
յորդեական ընդ անուան տոհմին և
կերպարանաւ երեմն , և բարուք գողցես
միշտ : Օի եթէ լոկ առ յաձախ գթոյ
սիրոյն և առ մեծի վարկին լուեալ իցէ
օրինակել երբեմն աշակերտին զվարդա-
պետն ընդ ուղութեանցն և զթերու-
թիւնս , քանի՞ն ապա ոչ ձշքրտեսցին
աստցեալքս 'ի ծնողս և 'ի ծնունդս :

Խելամտեալ միանգամ զօրութեանս՝
ազգեցութեանց ծնողաց 'ի զաւակունս ,
պարա է ապա քան զամենայն ուսուցիչս
ձարտարագոյն և քան զամենայն իմաս-
տասիրութիւն աղգող՝ աղգողագոյն հա-
մարել զծնողաց վարդապետութիւնս ,
և հզօր 'ի բնէ 'ի գրաւել զմիտս ման-
կրտոյն . և քան զբնաւս 'ի վարժոցաց
իմաստասիրաց ևս զօրաւոր զնել զան-
պաձոյձն և զընտանիս այս կրթարան
նախամարզ : Իստի ելեալ երբեմն ընդ
այլոց յոլովագունից և գեռահասակ
ոմն և թերատիք նահատակ քան զամե-
նայն իմաստասէր իմաստասիրագոյն , որ
զիատոնեանս , զի՞րուտոսեանս և զի՞ո-
կրատեանս արիութեամբն գլէր , արհա-
մարհէր զահաւոր տեսիլ դատաւորի և
դահձաց , և անգոսնելով զսպառնալիս
մահու՝ խոստովանէր թէ աշակերտ է
երկնաւոր և քրիտոսական իմաստասի-
րութեան՝ ատեցելոյն յայնժամ և հա-
լածելոյն յաշխարհէ : Խո զարմանայ-
ցեմք թերևս , թէ առ ումարդեօք հրա-
հանգեալ յայս անվեհերութիւն զայր
նա : Իւ մօրն , առ կնոջ միոյ այրուոյ աղ-
քատի և տառապելոյ , և մարզարան տնի-
կըն և եկեղեցի . այսչափ ահա զօրութի
նախակրթութեան : Խո զսահման զօ-
րութեան սորա , ծնողացն ըղձիւք միայն

համարիմ չափել և մաօք և սրտիւ : Շ ա-
մունէ մայր հաւատացեալ՝ որդիս ցան-
կայ իւր նահատակս օրինացն Իստուծոյ
Խարայէլի ընդդէմ ամպարշտութեանն
զինելոյ յայնժամ , և ահա փափաքանաց
կատարումն առ դուրս յաջողեալ տեսա-
նի : Դախոյ մայրն սպանիացի 'ի գաղ-
ղիական ծիրանիս՝ բարեպաշտի ըղձայ
զաւակի , և ժառանգէ Դաղղիա զբա-
րեպաշտագոյնն 'ի թագաւորս , յոր պան-
ծայ միշտ աշխարհն և պանծասցի : Աւ-
անգէտ բանիցս հաւաստեաց և ոմն եր-
բեմն յիշխողաց նախնոյն Խզիպտոսի ,
ցանկութեամբ ցանկայ , և անգէն թա-
գակալ հզօր և պայազատ տիեզերակալ
յաշխարհի թողու : Խո քան լիգուր-
կեան օրինաց՝ լակեդեմոնական մարզ
ծնունդս համարիմ զիիւցազունս Ապար-
տայ , որոց չե զհասարակաց վարժոցաց
զգրունս կոխեալ՝ ոգի սպարտական
թեածէր զնոքօք և սիրտ արիական
վառէր 'ի լանջս :

Աւ ինչ զանխութեկաց այս ձշմարտու-
թիւն և աստիկեան հանձարոյն՝ որ 'ի
գեղեցիկ մարզս իւրոյ պարսկածնունդ
զիւցազնին վարժելոյ յարժանագով
կրթարանս հասարակաց օրինօք , թերի
համարէր զամենայն առանց հայրենոյն
հրահանգաց :

Խո իցէ գովութիւն բաւական 'ի պան-
ծացուցանել զգաստիարակութեան և
զմանկութեան մարզից արդիւնս . ուր
ըստ մեծին աստուածայնոյն և աստուած-
իմաստ վարդապետին ։ Աւսումն ման-
կութե քանդէ 'ի քարի , , . սակայն վեմա-
խնդրէ անքիծս , զի 'ի յղկենս և յողոր-
կել շքեզս փայլեցուսցէ զընկալեալսն :
Դեղեցիկ է և քաղցրահամ անկոյ դաս-
տիարակութեան և պտղոցն արդասիք ,
այլ սերմանս իմն խնդրէ նա՝ թէպէտ
ծածկեալս , 'ի բոյսս անդ առաքինու-
թեանց : Աինչ զի համարձակիմ ասել ,
եթէ գաստիարակութիւն հասարակի
ոչ բնութեան գործէ փոփոխումն և ոչ
բարուց այլայլութիւն , այլ յղկեալ
բարեձեկ զայն , զեկամուտան 'ի թերու-
թեանց մերժէ 'ի բաց , սակայն և ոչ 'ի
բնոյթ եղելոցն 'ի սպառ բռնանալ զօրէ :

Օ խ որ՝ ի ծննդոց են ժառանգութիւնք՝ վերարկուաւ հրահանգաց պատրուաւ կեալ գեղերեսէ , և իբրև ոսկւով իմն օծեալ ընդ գեղեցիկ փայլ պատշաճից թողու անտես զթերութիւնս , այլ ոչ բնաւ համայնաջինննս : Այ ապա եթէ անփութութի գաստիարակելցն 'ի բաց առնուցու զայն ծածկոյթ , և խայտառակագոյն ծանակեսցին թերութիւնք :

Վանի ապա խտիր ընդ արդիւնս դաստիարակութեան և ընդ հրաշալի ծնունդ առաքինութեան , մանաւանդ ընդ մարդոյն զարմանալի յեղափոխումն նախակիրթ մարդիւք , ուր ուսեալքն ամենայն 'ի բնոյթ փոխեսցին անայլայլակ :

Որչափ զգուշութիւն էր արդեօք խորհրդոց , քանի դրունք զօրաւոր շըրթանց , որքան ամուր փականք ըղձից սրտի , եթէ օրէնք լինէին անխորշելիք դրոշմելոց մի մի զամենայն և զմանը իղձս յորմունս տանց յոր բնակիսք 'ի յիշատակ եկելցն զկնեաց որդւոց մերոց և թոռանց : Այ այն քան յորմունս խարիստուլս և 'ի ժամանակեայս 'ի միտս բանաւորս տղայոց և աղածրի մանկը տուոյն զնոյնս քանդակեմք 'ի տարրս անաղարտելի յանմահ յիշատակ . և կենդանի աշխարհաքարող վկայս թողումք զնոսաւ առաքինութեանց կամ մոլութեց աւանդելեացն , օրչներգուս բարերարացն և չարացն անիծիչս , և չխորհիմք ինչ այնչափ : Վանի քանի մարդկայնոց թերութեանց շարք պակասէին արդեօք յազգո հանդերձեալս , և որչափ մնութիապաշտ կամխակալ կարծիք նուազէին յաշխարհէ , եթէ 'ի ծնողաց ժառանգութեամբ ոչ փոխանցէին յօրդիս , որ 'ի բնոյթ նոյցա փոխեալ , բազումայն է զի և ապստամբք յալաւանի և յանագան դարմանոյ դաստիարակութեան գտանիցին :

Այսպէս ահա ծանրագնոյ աւանդք են որդիք առ յիշտուծոյ աւանդեալք 'ի իմաստն ծնողաց . և որպէս կամխեցի ասել՝ արարիչն ամենազօր արարիչս եդ զծնողս և աստուածս 'ի վերայ սերնդոց իւրեանց , և տէրս 'ի վերայ ժամանակեան կեան կենաց նոյցա . սակայն և այսոցիկ

փոխանակ՝ զորդւոցն կենաց գոզցես կապեաց զերջանկութիւն զատափի և զհանդերձեալ կենաց ծնողաց : Այ եծ է և ծանր պաշտօն ծնողաց և բազում պահանջմք 'ի նոցանէ . Իշտուած զիւր պաշտօնեայն խնդրէ , կրօնն զհաւատացեալ , հայրենիք զառաքինի քաղաքացին : Այ ապառատ ասել՝ մարդկութիւնն զմարդն :

Ի հրաշալիս արարչագործ մնաց տեսանեմ հրաշափառագոյն և խորախորհուրդն զատառածազպոյդ միութիւն առն և կնոջ 'ի ձեռնտու արարչազօր կարզութեան , ուր կրօնն , հաւատ և սէր յօդակապ կայ 'ի միջի , ուր այրն աստուածանման իշխանաբար Ճսիսանայ 'ի գլուխ իւրոցն 'նախախնամ տեսչութք , և կինն 'իբրև ոգի իմն բարերար հրկելով 'ի վերայ զաւակացն սիրակապ ընդ այրն և ընդ որդիս , համօրէն տանն շունչ և կենդանութիւն ամբարձեալ , և որդիք և դստերք իբրև ջահք լուցեալք 'ի մեծի տաճարին ընդ ոսկեձոյլ սեամք , և կամ իբրև բարունակք գեղզուղէշք գեղագարեալ զմարբն 'որպէս զպտղալց , առոյգահասակ , գեղագիտակ արմաւենեաւ : Ուր 'ի մի ոգի , 'ի մի իղձ , 'ի մի սէր ակումբն հոգեորի , ուր ամենայն ինչ քաղցք հնչէ հայր , մայր , որդիք , դստերք , եղբարք և քորք . և բարեացս այսոցիկ յօդիչ կրօնն և առաքինութիւն 'ի ծնողաց առ զաւակունս փոխանցեալ նախակիրթ գաստիարակութք : Ի այս ահա բարեբաստ երջանկութիւն զուգակցաց 'զապառնի կեանս մանկուցն կազմէ :

Ված խելամնեալ ասացելցոյ զգոնագունիցն և իմաստնոց լուրուպայ , որքիստոսական մարդաբարութեամք զամենայն գեղեցիկ Ճիզն 'ի գործ եղին և դնեն 'ի բարեբաստութիւն մարդկութեան , քաջ խելամնեալ լեալ ասեմ 'զի այս նախակիրթն դաստիարակութիւն զապացայ զլաւագոյն ազգն աշխարհի պատրաստեսցէ զորդիս նոցին , վասն որյ և առ բարեպարիշտ և առաքինի զուգակիցս յարդարելց զքաղաքացիս 'ընդ կրթութեան պատանեացն չարարին

ապախտ և զկրթութեամբ օրիորդաց , և հարսունա մարզել զնոսա հաւատարիմն և մարս բարեկրօնս ծնողս նորոց առաքինի քաղաքացեաց : Այս առ ՚ի յոյս ակնկալութեան յաւաջդիմութե ազդի միոյ և ժողովրդեան հարցանեն իսկ , իցե՞ն ՚ի պատուի օրիորդաց իննամբ դաստիարակութեան : Այս իցիւ թէ յայտնի էին կարեւոր ճշմարտութիքս և բարեսէր ծնողաց և բարեխնդիր ընտանեաց ազդիս , և յայնժամանշուշտ բազմախուռն չարեաց սերմունք՝ որ անխորշշլիքն համարին ՚ի բարուց մերոցն , ՚ի յընձիւղս անդ առ ոտս կոտորեալ՝ հաւաստէինս ստուգիւ թէ ամենայն չարիք գոզցես եկամուտք են ՚ի միտս մարդոյ ՚ի տգիտութենէ իւրոյ էութեանն , և չիք՝ թէ պէտ մարդոյ ՚ի իննամս չարին հաստատելոյ՝ հարկ բռնութեան : Այսպէս վերածնութիւն ազգի ՚ի գիտութիւնս , և նոքօք ՚ի վայելուչ քաղաքականութի ՚ի զարդ կրօնից բարեպաշտութեան , աստի կացէ իւր սկիզբն : Այսին զըժուարին , այլ արդիւնքն գեղածնունդ և ցանկալի :

Այսակայն լուայ յաձախ , և ամաչեմ իսկ ցարդ , լուայ ՚ի ծնողաց ժամանակիս , յորոց աղիտաբար բազումք՝ ՚ի սէր մնոտի պաճուճանաց և ՚ի բաց թօթափելոյ յանձանց զամօթիածն երկշոտութիւն կուտութեան , և ազատ ՚ի լոյ խոհական մարցն՝ ըղձան հասանել յայս կարդ աստուածասահման , լուայ ստէպ յեղյեղել թէ զի՞նչ փոյթ զի՞նչ հոգք թէ մանկունք իցեն մեր , թող մնուսցեն զնոսա դայեակիք , և ազինայք ՚ի չափ հասուսցեն , յանձն լիցին ապա դաստիարակաց , առ ինչ իցեն քահանայք յաշխարհի : Այս յետ այնորիկ իրեւ բարձր իմն չնորհ՝ զի կարողս զնոսա համարեցան ՚ի դաստիարակութիւն , զի յարգեցին զնոսա իրեւ զգիտունս , հաւատան նոցա զմանկունս իւրեանց . և ինքեանք գոհք ամենեւին որպէս եթէ զամենայն պարտս իւրեանց սոլաւ ՚ի գլուխ տարեալ՝ սպասեալ մնան մեծայոյս ընդ հուպ դաստիարակեալս տեսանելոյ զորդեակին հաւասարս զի-

տութեան և բարելաւութեան վարդապետացն : Այս էին և իղձք սոցա . այլ իցիւ թէ հասանէր յականջս նոցա հեծութիւն դաստիարակացս՝ ՚ի դժուարին ելս մարզից , ՚ի խոնարհել ամոքել զբըրտութիւն մոտաց մանկութե , և ՚ի սերմանել յանվար անդաստանս սրտից և մոտաց զսերմանս առաքինութեան և գիտութեան , և ոչ արդեօք անշուշտ յայնժամը ըստ ակնկալութեան ըղձիցն ոչ տեսմեալ և զելս երբեմն՝ անգուսնէին ընդդաստիարակս . և յամուր ապաւինի գտեալ իւրեանց յայն բան՝ թէ բնածին պարտ է լինել ՚ի մարդումն կրթութիւն և իմաստութիւն , և չիք այլով իւկիք դարսնան գտանել որոց անբաժն իցեն ՚ի ձրից անտի : Եղուկ բազմաձիգն վաստակոց դաստիարակացն և քրտանց՝ որ ՚ի տրխրութիւնս անդ մնավաստակ լինելոց յոմանա՝ հասցեն նոցա և համբաւոյն ստուերածք , թէ պէտ և թերատեսից մարդկան առաջի և ոչ իմաստնոց : Այս զի մի այսու իննդասցէ ոք՝ յանկարծ վհատեալս զմեզ համարելով ընդ գործոյս յաջողութիւն և ծափ զծափի հարկանիցէ , մարթիմ վստահութք հռչակել , թէ որչափ ըստ մերոցս անսահման ըղձից բարւոյ ազգիս լինիցիմք շատացեալ դաստիարակութեամբ՝ միշտ լաւագունից ակնկալեալ , որ և իմաստնոց մոտաց է նշանակ , սակայն և այնպէս պարծել պարծիմք յաշակերտեալսն մեր , որ յընթացս փոքրունց ամաց վկարեւորսն զամենայն ստացեալ ՚ի մարդավայելուչ կեանս յոյժ գեր ՚ի վերոյ գտանին՝ քան եթէ անկիրթ և անխնամէին մնայեալ , զի պատանեակիք են զեռ ևս , և բազմաց ունին պէտս իննամոց : Այս զի՞նչ իննամք իցեն , միտ զնել ապաւեմ , և պարզեցից ընդ հուպ :

(Ա Տ Ա Ր Ց Ն Յ Ա Խ Ա Զ Դ Ի Կ Ա Ց Ց Ս)